Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գրիգոր Գույանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Հանրային ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիանա Ղահրամանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Թաիլանդի Թագավորություն (Բանգկոկ)՝ 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև հուլիսի 8-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Օզոնի քարտուղարություն (Ozone Secretariat):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Մոնրեալի արձանագրության Կողմերի երկրների բաց աշխատանքային խմբի քառասունիինգերորդ հանդիպմանը ու Մոնրեալի Արձանագրությամբ ստանձնված պարտավորությունների արդյունավետ կատարմանն ու ամրագրված պահանջների իրականացման աշխատաժողովին:




6. **Քննարկված թեմաները (հարցերը).**

1. Մոնրեալի արձանագրության արդյունավետ իրականացման և կիրարկման հետագա ամրապնդում:
2. Մոնրեալի արձանագրության 2022 թվականի քառամյա գնահատումը՝ Հավելված F-ում չնշված հիդրոֆտորածխածինների սպառման և արտադրության և հիդրոքլորֆտորածխածինների հասանելիության մասին տեղեկությունը ներառյալ:
3. Տեխնոլոգիաների և տնտեսական գնահատման խմբի զեկույցը Մոնրեալի արձանագրության իրականացման բազմակողմ հիմնադրամի համալրման վերաբերյալ 2024–2026 թթ. կտրվածքով:
4. Մոնրեալի արձանագրության ինստիտուտների ամրապնդում, այդ թվում՝ անօրինական առևտրի դեմ պայքարում, և Մոնրեալի արձանագրության արդյունավետ կիրառման և կիրարկման ամրապնդմանն ուղղված աշխատաժողովի արդյունքներ:
5. Էներգաարդյունավետ և ցածր կամ զրոյական գլոբալ տաքացման ներուժ ունեցող տեխնոլոգիաներ:
6. Կարգավորվող նյութերի մթնոլորտային մոնիթորինգի գլոբալ ծածկույթի բացերի հատկորոշում և նմանատիպ մոնիթորինգի ուժեղացման տարբերակներ:
7. Տեխնոլոգիաների և տնտեսական գնահատման խմբի 2023 զեկույց, ներառյալ՝ 2024 թվականի համար մեթիլբրոմիդի կրիտիկական օգտագործման բացառման հարցեր և քառաքլոր ածխածնի շարունակական արտանետումներ:
8. Խիստ կարճակյաց նյութերի այդ թվում՝ դիքլորմեթանի ներառում Մոնրեալի արձանագրության իրավակարգավորման տիրույթ:
9. ՀՖԱ-23-ի արտանետումներ:
10. Ոչնչացման հաստատված տեխնոլոգիաների ցանկի փոփոխություններ:
11. Սառնագենտների կյանքի ցիկլի կառավարում:

**7. Հանդիպումները, ելույթները.**

Մոնրեալի արձանագրության Գործադիր կոմիտեի 92-րդ նիստի շրջանակներում իմ կողմից նախաձեռնվել են հետևյալ երկկողմ հանդիպումները.

- Օզոնի քարտուղարության Գործադիր քարտուղար Մեգումի Սեկիի հետ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում՝ նվիրված 2023 թվականի Օզոնային շերտի պահպանության համաշխարհային օրվան (սեպտեմբերի 16) նվիրված Հայաստանում կայանալիք միջոցառումներին մասնակցություն բերելուն: Հանդիպման ժամանակ Գործադիր քարտուղարին տեղեկացվել է պաշտոնական գրության և մասնակցության հրավերի ուշացման վերաբերյալ՝ հայցելով ներողամտություն:
- Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ) շրջակա միջավայրի ծրագրերի ղեկավար Աննա Կոբըլեցկայի հետ տեղի է ունեցել երկկողմ հանդիպում, որի ընթացքում քննարկվել է Հայաստանի տնտեսագիտական համալսարանի «Մաքսային գործ» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողներին ՀՄԿ-ի «Կանաչ մաքսատուն» առցանց դասընթացներին հասանելիության ապահովման հնարավորության հարցեր:

- Օզոնի քարտուղարության աշխատակիցներ Սոֆիա Միլոնայի և Ջերալդ Մուտիսիայի հետ տեղի է ունեցել երկկողմ հանդիպում, որի ընթացքում քննարկվել է օզոնաքայքայիչ նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման/արտահանման լիցենզավորման համակարգի արդիականացման հարցեր:
- ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի «ՕզոնԷքշն» բաժանմունքի աշխատակից Վիկա Ռոջերսի հետ տեղի է ունեցել երկկողմ հանդիպում, որի ընթացքում քննարկվել է օզոնաքայքայիչ նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման/արտահանման լիցենզավորման համակարգի արդիականացման հարցեր, այդ թվում ՝ Ֆիջիի քվոտավորման համակարգը:
- Վրաստանի Օզոնային շերտի հարցերով ազգային համակարգող Նոե Մեգրելիշվիլիի հետ տեղի է ունեցել երկկողմ հանդիպում՝ նվիրված ԵՄ-Վրաստան ասոցիացման համաձայնագրի շրջանակներում ստանձնած օզոնային շերտի հարցերին առնչվող պարտավորությունների կատարմանը, մասնավորապես՝ ոլորտային մասնագետների սերտիֆիկացման համակարգի ներդրմանը:
- Հայաստանի Հանրապետությանը վստահվել է Խիստ կարճակյաց նյութերի վերաբերյալ Կանադայի, Ավստրալիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ-ի կողմից նախաձեռնած որոշման նախագծի քննարկման նպատակով ձևավորված ոչ ֆորմալ խմբի համաղեկավարի դերը Չեխիայի հանրապետության ներկայացուցիչ Յանա Մասիչկովայի հետ համատեղ.





**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

- Վրաստանի Օզոնային շերտի հարցերով ազգային համակարգող Նոե Մեգրելիշվիլիի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն ոլորտային մասնագետների սերտիֆիկացման համակարգի ներդրմանն առնչվող իրավական ակտերի տրամադրման վերաբերյալ՝ դրանք ուսումնասիրելու նպատակով:
- Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ) շրջակա միջավայրի ծրագրերի ղեկավար Աննա Կոբըլեցկայի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ուսումնասիրելու քննարկված հարցը և հետադարձ կապի միջոցով Հայաստանին տեղեկացնելու հնարավորության հասանելիության մասին:
- Խիստ կարճակյաց նյութերի վերաբերյալ ոչ ֆորմալ աշխատանքային խումբն արձանագրեց քննարկման բավարար արդյունքներն ու մասնակից կողմերի կողմից ցուցաբերած հետաքրքրությունը հարցի նկատմամբ և որոշվեց 2023 թ. որոշման նախագիծը ընդգրկել 2023 թվականի հոկտեմբերին Նայրոբիում կայանալիք Մոնրեալի արձանագրության կողմ երկրների 35-րդ հանդիպման օրակարգում:

10. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ դիտարկումները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**
- Առաջարկում եմ ուսումնասիրել Վրաստանի ոլորտային մասնագետների սերտիֆիկացման համակարգի ներդրմանն առնչվող իրավական ակտերը, որոնք ընդունվել են ԵՄ օրենսդրության մոտարկման նպատակով:
- ՀՄԿ-ի հետադարձ կապը ստանալուց հետո, վերջինիս դրական լինելու պարագայում, ապահովել Հայաստանի տնտեսագիտական համալսարանի «Մաքսային գործ» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողներին ՀՄԿ-ի «Կանաչ մաքսատուն» առցանց դասընթացներին հասանելիություն:

*Գործուղվող* *Լիանա Ղահրամանյան*

*11.07.2023թ.*